ձգելոց են, և անտի քարշեն ի վեր. նմանապէս և անտի իջուցանեն ի վայր։ Իսկ եթէ թագաւոր իջուցանելոց են, պահեն զկարգն և որոյ իցէ կարգն՝ զայն եւս այսու կերպիւ իջուցանեն ի վայր։

Իսկ ի ժամանակս Թովմաճանին էր այն Իթեկէ թագուհին, որ մեծաւ հանճարեղութեամբ կառավարէր, և թոռն էր յայնժամ ամաց չորեքտասանից, և ի զանձապետութեանն Թովմաճանի որդին իւր Պողոսն եւս ի պալատն բազում անգամ գնալով գալով՝ ետես չորեքտասանամեայ թագաւորն զՊողոսն որ հասակակից իւր էր, սպիտակ և գեղեցիկ՝ երեքտասան ամաց, յարեցաւ ի նա և խօսեցաւ ընդ նմա և սիրեաց յոյժ։ Վասն որոյ գնացեալ խնդրեաց ի մեծ մօրէ իւրմէ Իթեկէն՝ թէ որդի Թովմաճանի Պողոսն եկեալ երբեմն խաղասցէ ընդ իւր։ Եւ թագուհին կոչեալ զԹովմաճանն ասէ. Յերկուս և յերիս աւուրս ի շաբաթու թոյլ տուր Պողոսիդ զի եկեալ խաղասցէ ընդ թոռանս իմոյ։ Իսկ Թովմաճանին յառաջ փոքր ինչ անհաճոյ էր այս խնդիրքն թէ Պողոս մանուկն իւր աւերի։ Վերջապէս ետ հրաման որդւոյն գնալ և խաղալ ընդ թագաւորի, որ յետոյ միջնորդութեամբ Պողոս որդւոյն բազում խնդրուածք հօրն կատարէին, զի Պողոսն բազում համարձակութիւնս ունեցաւ ի պալատին միջնորդութեամբ թագաւորին։ Այլ եւս զմեծամեծ իրս աղաչէր թագաւորին և նա մեծ մօրն խօսէր և իսկոյն կատարէին խնդրուածքն։

Եւ այսու կերպիւ Պողոսն թէ՛ վասն իւր և թէ վասն հօրն առնէր զբազում բարութիւնս, և մեծ համբաւ ստացաւ Պողոսն, զի ընդ թագաւորի համարձակ միւսահիպ էր և խաղայր ընդ նմա և յոյժ սիրելի եղեւ թագաւորին՝ այնքան մինչեւ վասն իշխանական պաշտօնից ինչ՝ որք պատկանեալ էին թագաւորի, եկեալ տրօք աղաչէին զՊողոսն արտաքոյ պալատին եղեալ մեծամեծք, և նա խօսէր ընդ թագաւորին և կատարէր զխնդրուածս նոցա և շահէր յոյժ յոյժ։

Այլ այս եւս յայտ լիցի, զի ամենայն արհեստագործքն քաղաքին են բնաւքն ի ներքոյ հրամանի զանձապետին. իսկ դերձակքն բնաւքն են մահմետականք, և էին ստրուկք. նմանապէս զոն եւս հրեայք. նոքա եւս են ստրուկ ռայէք. և սոցա եթէ յանցանք ինչ հանդիպէր, այս էր սովորական պատիժ նոցին, զի կալեալ բերեն ի պալատ զանձապետի արկանեն ի բանտ և ի շղթայս, և անսուաղ պահեն զաւուրս վեց կամ եօթն մինչեւ ի տասն օր ըստ յանցանացս։ Իսկ զանձապետն Թովմաճան ողորմելով սոցա ոչ պահէր անսուաղ, այլ տայր ուտել. և տայր եւս ֆալախայ ըստ յանցանացն 100–150–200, մինչեւ ցերիս հարիւր, ուսեալ ի Կ. Պոլիս ի մահմետականաց, որք որպէս առնէին հայոց և յունաց, ըստ այնմ կերպի և Թովմաճանն առնէր մահմետականաց. և այնքան երկեան յայս ֆալախայից, մինչեւ կամէին անսուաղ մնալ զաւուրս հնգետասան՝ քան հարկանիլ ջլօք ի յոտսն։ Եւ ի մեծէ ահէ ֆալախային՝ բողոքեցին առ թագուհին. և յանդիմանեալ ի նմանէ՝ գլխակոր դարձան յետս, զի կանխապէս Թովմաճանն առեալ էր զհրաման ի թագուհւոյն։

1765 – Այդ յորժամ հասանեն ի Դեկտ. 25 մեծ ցնծութեամբ կատարեն զտօն Ծնընդեան Տեառն մերոյ. և ի տարեգլխոյն 1765 ի պալատ թագաւորի մեծ խրախճան լինի ճգմաթեկաց այսինքն բաշայից որք ըստ 14 բաշայութեանց 14 բաշայք ունի, և սոքա ըստ մեծի մասին արտաքս գտանին։ Իսկ եթէ գոցի ոք ի նոցանէ ի քաղաքին՝ կոչեն զնա իւրայնովքն, այլ եւս զմեծամեծ իշխանն կոչեն։ Եւ թագուհին ընդ թոռան իւրում նստի ի բարձրաւանդակ տեղի ինչ զարդարեալ, և ի սեղանի իւրաքանչիւր ոք զսպասաւոր մի ընդ իւր պարտի ունել, որք կերակրեսցեն ձեռօք իւրեանց զտեարսն, զի առաջի թագուհւոյն ամօթ մեծ համարին իւրեանց ձեռօքն ուտել, այլ տէրն բանայ զբերանն և սպասաւորն իւր ձեռօքն զպատառն առեալ դնէ ի բերան տեառն իւրոյ։

Եւ հաց նոցին ոչ է ի ցորենոյ, այլ՝ այլ իմն յունդոյ կակուղ նման դատայի-